

ՆՈՐԱՇԱՅՑ ԴԱՄԲԱՐԱՆ ԴԵՆԻԱՄԻՆ 2-ԻՑ

1995թ. աշնանը Շիրակի երկրագիտական թանգարանի արշավախումբը (ղեկ. Գ. Խաչատրյան) ԳԳ Շիռակի մարզի Ազատան գյուղի մերձակայքում «Ղեռ» կոչվող բլուրների վրա և դրանց հյուսիսից ու արևելքից հարող դաշտերում հայտնաբերեց մեծ ընանակայր և դամբարանադաշտ¹: Գուշարձանը տեղադրված է երկու բլուրների մրա և նրանց եարող դաշտերում: Բլուրներից մեկի զագաթին պահպանվել են կիկլոսյան ամրոցի մնացորդներ, իսկ մյուս բլրի վրա և դաշտերում նշմարվում են բնակավայրի հետքերը: Երկու բլուրների միջև հավանաբար գետակ է եղել, որը հետագայում վերածվել է հեղեղատի: Ըստ հայտնաբերված նյութի՝ հուշարձանը նախապես թվագրվում է երկաթի լայն տարածման և անտիկ դարաշրջաններով: Որոշ նյութեր վկայում են այն մասին, որ այստեղ կարճ ընդմիջումից եետո կյանքը վերականգնվել է վաղ միջնադարում:

1996թ. Ազատան գյուղի հովիվ Վիլիկ Ուսուբյանը երկու բլուրների միջև գտնվող հեղեղատում, մի մեծ քարի տակից գտել էր կավե գավաթ: 1997թ. ՇԵԹ-ի արշավախումբի կողմից տեղանքի ուսումնասիրությունը ընդգրկեց այն եզրահանգման, որ դա անձրևաջրերից կիսավեր դամբարան է:

Պեղումները պարզեցին, որ դա բլուրների միջև կառարված հիմնահողաքի թաղում է: Թաղման խուցը գտնվում է հեղեղատի եզրին: Այն ուղղահայաց կտրվածքով սլառարատված փոս է: Խուցը շատ փոքր է, մոտավորապես 80 x 80սմ է, քիչ կլորացված անկյուններով: Խցի արևմտյան, արևելյան և հյուսիսային պատերը ուղղահայաց կտրվածքով լամբն է, իսկ հարավայինը, որն անմիջապես ետրում է հեղեղատին, վերջինիցս պաշտպանվելու համար սահմանափակված է միջին մեծության մի քարով: Դամբարանի վրա, ստո 70սմ բարձրությամբ, անկանոն, երկարավան մի քար է դրված: Եթե ընդունենք, որ դա ծածկաաալ է, ապա այն հավանաբար միջին բրոնզի ժամանակաշրջանում եանդես եկած և հետագայում լայն տարածում ստացած եուշակոթողի նախատիպն է²: Ժամանակակից ընկալմամբ այն դիտվում է որպես երկինք տանող ճանապարհ և առնչվում է տիեզերական առանցքը խորհրդանշող կենաց ծառի եետա, որը կարող էր նախատել հանգուցյալի վերածննդին³:

Դամբարանում հայտնաբերվեց երկու կմախք: Կմախքներն իրենց թաղման մակարդակներով տարբեր են և մոտ 30սմ ռածմարար շերտ ունեն: Պատկերն այսպիսին է.

1-ին կմախքը, որ նստած դիրք ունի, մեջքով եենված է դամբարանի հյուսիս-արևելյան պատին, ոտքերը ծալված են եղել ծնկներից ռարձր, սակայն եետագայում թեքվել և ընկած դիրք են ընդունել: Այս հանգուցյալի հետս դրվել են խնոցի և կարաս, որոնք բավականին մեծ են՝ ունեն մոտ 30սմ ռարձրություն:

Ամմիջապես կարասի թերանին եյուսխ-հարավ ուղղվածությամբ դրված է մի դաշույն, որն արդեն երկրորդ ցատքի ծախ կողքին է: Այսինքն 1-ին թաղումը կատարվել է, հողը լցվել է ամանների ռարձրությամբ և հետո դրվել երկրորդ աճյունը:

2-րդ կմախքն իր դիրքով խաչվում է առաջինի եետ: Առաջինի դեմքը ուղղված էր հյուսիս, իսկ երկրորդին՝ արևելք: Որ հիշյալ թաղումները միաժամանակյա են, եետատում է այն, որ եթե երկրորդ թաղումը եետագայում կատարվեր, ապա կարասի թերանի և դաշույնի թածմարար շերտն ալնքան ռարսկ է, որ ամպայման կնկատվեր: 2-րդ կմախքի հետս դրվել էր մի երկկոնիկ սալիոր, որին թերանով լծալի կմախքի դեմքը եենված էր սր թաս: Դամբարանից հայտնաբերվել է բրոնզե ականջող: Գավաթը գտնվել է դամբարանի արևմտյան եետվածից, սեղալոր ռացած շերտում:

Կարասը մուգ մոխրագույն է, մանր ավազախառն կավից, դուրզի վրա պատարսոված: Վատ թրծելու եետևանքով ամոթը միատոն է: Կոունր ռարձրությունը 29սմ է, ռերանի տրամագիծը 22սմ, նստակինը՝ 9սմ: Իրանը, ասաիճանաբար լայնանալով, ստանում է գնդի ձև, որի ամեմաբարձր եետվածը զարդարված է վերադիր, աջից ծախ թեքությամբ, զարեմախշ գուսիով: Իրանից վիզը ամցումը մույն աստիճանական ընթացքով է, որը կարճ վզի աակ ընդհատվում է ծախից աջ ռոշորահաաակի, անփույթ արված խորակոս եզրագծով եետտ շուրթով: Նմանօրինակ կարասներ ոսյունի են Արթիկի դամբարանադաշտից (թիվ 62, 87, 142, 165 և այլն)⁴, որոնց մի մասը թվագրվում են ուշ բրոնզի 1-ին փուլով՝ մ.թ.ա. XIV-XIIIդդ., իսկ մյուս մասը, (թիվ 165, 202, 229) ուշ բրոնզի 2-րդ փուլով՝ մ.թ.ա. XII-XIդդ.⁵: Գայսստանում դրանք հայտնի են նաև Ոեղկին-Լաեերից⁶, Կարմիր-Բլուրից⁷ և այլ հուշարձաններից:

1. Տն՝ ՀՀ 1993-95թ.թ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նաաշրջանի զեկուցումների թեզիսներ, եր. 1996. էջ 31:

2. М. Стеблин-Каленский, Старшая ЭДДА, М. II. 1963г. ст. 216-218.

3. Э. Церен, Лунный бог, М 1976, ст.138-142, 264, М. Элиаде, Космос и история, М. 1987г. ст 169.

4. Т. Хачатрян, Армянский некрополь, Ер. 1979, ст.136, 145, 170, 178.

5. Նույն տեղում էջ 14-15:

6. С. Есаян, Культура племен северо-восточной Армении, Ер. 1976, таб 3, рис. 5.

7. Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հնագիտական հուշարձանները, պրակ 2, ադ. LVI. Ոկ. 9, LIX, Ոկ. 1-3:

Խնոցին սև է, ըարձրությունը 30սմ է, հատակի տրամագիծը՝ 8,5սմ: Խնոցու վիզը և շուրթը կտրված են, ըայց հարթեցված, որը ցույց է տալիս, որ այն օդտազործվել է շուրթը կտրվելուց եետո ևս, ըայց ալլ նպատակով: Խնոցին ունի եարթ մտակ, ծղված իրան, ուի վրա արված է երեք խորակոս շրջագոտի: Իրանի վրա կա նաև անցք:

Կավից խնոցիները օգտագործման մեջ են մտել ուշ բրոնզի դարաշրջանում: Թ. Խաչատրյանը դրանք բաժանում է երկու խմբի, խնոցիներ առանց ըոնակի և խնոցիներ ըոնակով⁸: 1-ին խմբի խնոցիները ունեն ծղված իրան, քիչ ծղված վիզ և ճկված շուրթ: Անոթի վզից ներքև, իրանի վերին մասում կա մոտ 1-1,5սմ տրամագծով անցք: Այս խնոցիների պատերը ըարակ են: Նման խնոցիներ Շիրակում, մինչև Բենիամին-2-ի գոտան, չեն հայտնաբերվել: Դրանք հայտնի են Հայաստանի այլ հուշարձաններից՝ Կիրովականից⁹, Ռեդկին-Լազերից¹⁰: Ըստ Թ. Խաչատրյանի, այդ խնոցիները Հայաստանում քիչ են տարածված և հավանաբար կապված անհարմարավետության և ցածր արտադրողականության հետ, դրանք կենցաղավարի են շատ կարճ ժամանակահատվածում: Վերջին փաստի հետ էլ կապվում են խնոցիների ավելի արդյունավետ տիպի հանդես գալը, որոնք ավելի մեծ չափերի են, լակ պատերը հաստացված են և ներսի կողմից ունեն խորդուրորություններ, որպեսզի չփման մակերեսը մեծանալով, կարագի հունցումը արագ կատարվի: Խնոցիների 1-ին տիպը, որին պատկանում է նաև Բենիամին-2-ի գոտան, թվագրվում է մ.թ.ա. 2-րդ եզրահամայակի վերջով¹¹

Ասփորը գորշավուն է, պատարստված ըավակամին լավ հունցված կավից, դուրզի վրա: Բարձրությունը 18սմ է, ըերանի տիամագիծը՝ 12սմ, մտուկինը՝ 11,5սմ: Այս ունի տափակ մտուկ, երկթեք իրան, որի ըարձր մասում նկատվում է իրարից 2,3,3սմ հեռավորության վրա երեք խորակոս նախշեր: Վիզը կարճ է, իրանից վրզ անցումը սկսվում է երրորդ խորակոս նախշից, որն ստեղծում է այն տպավորությունը, թե վիզը սեղմված է իրանի մեջ: Շուրթը ճկված է դեպի դուրս:

Նմանատիպ սփորները հայտնի են Արթիկի դամբարանադաշտից (թիվ 39, 140, 563 և այլն)¹², Թագաբենդից¹³, Լոսի-Բերդից¹⁴ և այլն, որոնց մի մասը թվագրվում է մ.թ.ա. XII - XI դ.դ. (39, 563):


Բենիամին -2-ից գտնված թասը գորշ գույնի է, ձեռքով պատրաստված, վատ թրծված: Բարձրությունը 8,3սմ է, մտուկի տրամագիծը՝ 10սմ, ըեիամինը՝ 20,5սմ: Թասի մտուկը տափակ է, լայնացող իրանով, որի մեծնարարձր մասում կարճ և փոքր-ինչ թեք անցումով ձևավորվում է շուրթը, որը ուղիղ կտրվածք ունի, քիչ ալիքավոր եզրերով: Նմանօրինակ թասերը կրկին շատ են Արթիկի դամբարանադաշտից (թիվ 99, 113, 119 և այլն), որոնց մեծ մասը թվագրվում են մ.թ.ա. XII-XI դ.դ.¹⁵

Գավաթը մոխրագույն է, խոշորաեատիկ կավից, ըարձրությունը 4,5սմ է, մտուկի տրամագիծը 5,5սմ, ըերանինը՝ 9,5սմ: Այն տափակ մտուկով է, լայնացող փոված իրանով, որի կենտրոնից փոսածև անցումով ավարտվում է տննշան ետ ճկված շուրթով: Գավաթն ունի ունկ, որը սկսվել է շուրթից և ամրացել իրանին: Սասնակի պահպանված են միայն ունկի հիմքերը: Գավաթը իրանի արտաքին կողմում վնասված է, շուրթի մի եզրը՝ թերի: Կավի վատ հունցված լինելու պատճառով, անոթը քիչ ծակոտկեն արտաքին ունի: Գավաթն իր ուրվագծում անկանոն է, ներսի մասում՝ ունկի հատվածում դուրս սեղմված, որից էլ մտուկի շրջանը քիչ ծվածիոր տեսք ունի:

Նմանօրինակ գավաթ Շիրակում հայտնի է Ռակեեսակի թիվ 4 դամբարանից, որը թվագրվում է մ.թ.ա. XI-X դ.դ.¹⁶

Դամբարանի թվագրման եամար որոշիչ նշանակություն ունի թրոնգե դաշույնը: Այն ունի 18,5սմ եիկարություն, շեղիինը՝ 15սմ: Շեղիի ծայրը սուր է, նշմարվում է ըոնակի ամրացման համար նախատեսված անցքը: Դաշույնի հետ պահպանվել է թրոնգե պահուսակը և զանգակածև օխտիկը: Պահուսակի վրա կա կոթի ամրացման համար արված երեք անցք: Կլոսոսը սնամեք է, զարդաիված է եռանկյունածև և քառանկյունածև կարվածքներով, իսկ վեիևում ծակոտկեն է: Նմանօրինակ դաշույններ Շիրակում հայտնաբերվել են Արթիկի շրջանի Վարդաքարից և Պարնիից¹⁷ Գյումրու մսի կոմբինատի և օղանավակայանի տարածքներից¹⁸ Արևիկ գյուղից¹⁹: Հայաստանիցում դրանք հայտնաբերվել

8. Т. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ер. 1963, ст. 144-146
9. Կ. Ղաֆաղարյան, Դամբարանների պեղումները Կիրովականում, Տեղեկագիր Արմֆանի, 1941թ, դ 3-4, էջ 55-69:
10. Т. Хачатрян, Материальная культура древнего Артика, ст. 145.
11 Նույն անվան, էջ 145-146.
12. Т. Хачатрян, Артикский некрополь, ст. 129, 170, 361.
13. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер. 1364, ст. 86, рис. 40.
14. Ս. Դեերյան, Լևի բերդի բրմի դամբարանը, ՊԲՀ, 1986թ. դ3, էջ 109, աղ. 1-ին:
15. Т. Хачатрян, Артикский некрополь ст. 14-15.
16. Л. Петросян, Раскопки памятников Кети и Воскеаска (3-1 тыс. до н.э.) Ер. 1989 ст. 74-75.
17. Т. Хачатрян, Древняя культура ширака, Ер. 1975г. ст. 15-16, рис 1,2,
18. Պեիվում է Շեթ-ում, ինվ. 384, 372, 517:
19.Հ. Մարաիրոսյան, նշվ. աշխ., աղ. XXII, նկ. 17, 18:



են նաև Աևսնից, Կամուից, Գորիսից,²⁰ Նորատուսից,²¹ Կիրովի դամբարանադաշտից,²² Կիրովականից²³ վերը նշված դաշտային գլխիկի նման առանձին գլխիկներ Շիրակում հայանաբերվել են նաև Անի-Պեմզայից և Գյումրուց: Բացի Թ. հաշատյանի երաաարակած գլխիկից,²⁴ հայտնի է մեկ այլ նմանօրինակ գլխիկ, որը պահվում է Շեթ-ում (նս.) և հրատարակված է: Դա Բենիամին-2-ից դաշտային գլխիկից տարբերվում է չափերով (մեծ է), զարդանախշերով և ներքևի մասում կոթին միացող քառանկյուն ելուստով: Այս դաշտային իր ձևով պատկանում է հնագիտական գրականության միջ հայտնի «սևանյան» տիպի դաշտայիններին: Ըստ Ս. Եսայանի, դաշտայինների այս տիպը դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից հանդես եկած և մինչև մ.թ.ա. XII-XI դ.դ. գոյատևած դաշտայինների շեղբերի վերապրուկային տարբերակն է²⁵: Դրանք գոյատևում են մինչև մ.թ.ա. IX-VIII դ.դ., բայց արդեն շեղբեր կրկաթից է, իսկ պահուցակը և գլխիկը՝ ռոմեոից²⁷: Շիրակից հայտնաբերված վերոհիշյալ դաշտայինները թվագրվում են մ.թ.ա. XII-XI դ.դ.²⁸:

Ավանջօղը պատրաստված է բրոնզալարից: Մի ծայրը սուր է, իսկ մյուս ծայրը սեղմված: Լմանօրինակ ականջօղեր հայտնաբերվել են Հայաստանի եամաժամանակյա ռազմաթիվ հուշարձաններից:

Բենիամին-2-ի նյութերի համեմատությունը վերոհիշյալ համալիրների ստույգ թվագրված նյութերի հետ թույլ է տալիս դամբարանը թվագրել մ.թ.ա. XII-XI դ.դ.:

Այլ է զավաթի հարցը, որը թվագրվում է մ.թ.ա. IX-VIII դ.դ.: Հավանաբար այն չի պատկանել թաղմանը, և դամբարանի տարածքում հայտնվել է ջրաթերուկ շերտից, պատահաբար:

Բենիամին-2-ի նորահայտ դամբարանը լրանում է մեր պատկերացումները հուշարձանի վերաբերյալ: Բնականաբար, այստեղ պեղված միակ դամբարանը, դեռևս հնարավորություն չի ընձեռնում ողջ համալիրը թվագրելու համար:

Հուսով ենք, հետագա աշխատանքներով կուրվագծվեն դամբարանադաշտի սահմաններն ու ժամանակաշրջանը:

РЕЗИОМЕ Ս. ԵԳԱՆՅԱՆ, Գ. ՄՏՐՅԱՆ

Осенью 1995г. экспедиция краеведческого музея Ширака (рук. А. Хачатрян) обнаружила новый памятник, который находится недалеко от с. Азатан Ширакской области, 1-1,5км северо-восточнее от известного античного памятника Бениамина. Памятник расположен на двух холмах и на примыкающих к нему полях. На одном из холмов расположена циклопическая крепость. На другом и в поле заметны следы архитектурных сооружений поселения. Между двумя холмами протекала речка. По подъемному материалу памятник предварительно датирован эпохой широкого освоения железа и античным периодом. Некоторые материалы указывали, что после короткого перерыва жизнь здесь возобновилась в раннем средневековье. В 1997г. во время разведочных раскопок, от местных жителей поступило сообщение, что в овраге между двумя холмами из под большого камня выступила керамическая чаша. Осмотр показал, что на этом месте есть полуразрушенное дождями погребение. Раскопки данного погребения выявили грунтовое захоронение. В погребальной яме были обнаружены два скелета. Сопутствующий инвентарь состоял из караса, миски, чаши, маслбобойки, из серого биконического сосуда и кинжала "севанского" типа. Все указанные материалы имеют аналоги в памятниках Ширака и Армении. По классической датировке погребение из Бениамина-2 относится к XII-XIII в. до н.э.

20. Ս. Եսայան, *Оружие и военное дело древней Армении*, Ер. 1966, ст. 75.
 21. Հ. Մարտիրոսյան, *Աշխ. աշ. XXI, ԱԿ. 1, 2*:
 22. Ս. Եսայան, *Культура племен северо-восточной Армении*, Ер. 1876, ст. 200, табл. 136.
 23. Պեմզում է Կիրովականի երկրագիտական քննարկում, *Ինվ. 441/30, 145, 629/4*:
 24. Թ. Խաչատրյան, *Աշխ. աշխ. էջ 23., ԱԿ. 4, 5*.
 26. Ս. Եսայան, *Աշխ. աշխ., էջ. 73*.
 27. Նույն տեղում, էջ 76.
 28. Թ. Խաչատրյան, *Աշխ. աշխ., էջ 15-16, Հ. Մարտիրոսյան, Աշխ. աշխ., էջ 29*: